



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ԷՆՍԻՆՈՅԻ  
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Օգոստոս 10-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը: Ս. Պատարագի ընթացքին, գնահատելով եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Ս. Ռազմիկ Թիւյ. Խաչատուրեանի ծառայութիւնը, Առաջնորդ Սրբազան Հայրը սել ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք պիտի շնորհե անոր:

Յայտնենք, որ Յուլիս 6-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը Փասատինայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Ս. Խորեն Թիւյ. Պապոշեանի շնորհեց սել ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT  
HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

On Sunday, August 10<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino. During the service, the Prelate will bestow Rev. Fr. Razmig Khatchadourian with the honor of bearing an ornamental cope (*dzaghgya pilon*) for his dedicated service.

The Prelate bestowed this same honor on Rev. Fr. Khoren Babochian, parish pastor of St. Sarkis Church in Pasadena, during Divine Liturgy on July 6, 2008.

**ԹԵՄԻՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐ  
ՊԻՏԻ ՄԱՆՆԱԿՅԻՆ ՄԻՋ-ԹԵՄԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինումով, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Երիտասարդական Բաժանմունքի

կազմակերպութեամբ, Միջ-Թեմական Երիտասարդական Համագումար մը տեղի պիտի ունենայ 13-20 Օգոստոսին, Անթիլիաս, Լիբանանի մէջ, »Հայ Երիտասարդը 21-րդ դարու մարտահրաւերներու դիմաց« թեմայով:

Մեր Թեմէն սոյն համագումարին պիտի մասնակցին 10 երիտասարդներ, առաջնորդութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի:

Համագումարին պիտի ներկայացուին դասախօսութիւններ, պիտի կատարուին կլոր սեղանի շուրջ գրոյցներ եւ խմբակներու կողմէ քննարկումներ: Երիտասարդները պիտի մասնակցին եկեղեցական արարողութիւններու եւ առիթը պիտի ունենան լսելու Վեհափառ Հայրապետին պատգամը:

## **PRELACY YOUTH TO PARTICIPATE IN CATHOLICOSATE OF CILICIA CONFERENCE IN ANTELIAS**

By the ordinance of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia and the initiative of the Catholicosate Youth Department, a youth conference will take place from August 13-20 in Antelias, Lebanon. Youth from all Prelacies will participate in the conference, the theme of which is «The Armenian Youth and the Challenges of the 21<sup>st</sup> Century».

A delegation of ten youth, headed by Very Rev. Fr. Barthev Gulumian, will participate in the conference, which will consist of lectures and discussions, as well as church services and an opportunity to hear the message of His Holiness.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻՆ ԵՉՐԱՓՈԱԿԻՉ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՏԱՅ**

Ֆրեզնոյի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Վահան Զիւյ. Կոստանեանն ու հոգաբարձութիւնը, անցեալ տարիներու նման, այս տարի եւս կազմակերպած էին ամառնային Աստուածաշնչական սեմինար-բանակում, որ տեղի ունեցաւ 3-էն 8 Օգոստոսին, Ֆրեզնոյի մէջ, մասնակցութեամբ շուրջ 80 երեխաներու եւ իրենց ծնողներուն:

Սեմինար բանակումին մասնակցողները առիթը ունեցան Տէր Հօր առաջնորդութեամբ սորվելու հայ եկեղեցւոյ շարականներ, սաղմոսներ եւ աղօթքներ, ինչպէս նաեւ սերտելու աստուածաշնչական պատմութիւններ:

Ուրբաթ, Օգոստոս 8-ին, սեմինարի փակման առթիւ, հրաւիրուած է Առաջնորդ Սրբազան Հայրը, որ պիտի տայ եզրափակիչ դասախօսութիւն մը՝ Զրիստոնեայ Հայ Ընտանիքի մասին:

## **PRELATE TO DELIVER THE CLOSING LECTURE AT HOLY TRINITY CHURCH VACATION BIBLE CAMP IN FRESNO**

Each year, a weeklong vacation Bible camp is organized at Holy Trinity Church in Fresno, with the joint efforts of Rev. Fr. Vahan Gosdanian and the Board of Trustees. This year, over 80 youth and their parents participated in the camp which took place from August 3<sup>rd</sup> to the 8<sup>th</sup>.

Throughout the week, participants learned Armenian hymns, psalms, and prayers, and followed Bible study sessions as well as workshops on marriage and family life.

The Prelate departed for Fresno on Friday, August 8<sup>th</sup>, to deliver the closing lecture on the Christian Armenian family.

## **ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԵՅԼԻ ADVENTIST ՀԻՄՆԱԴԱՆՈՑԻՆ ՍԷՋ**

Տարիներու ավանդութեան համաձայն, Չորեքշաբթի, Օգոստոս 6-ի առաւօտեան, Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու սարկաւազները այցելեցին Glendale Adventist հիւանդանոցը եւ անոր մատրան մէջ կատարեցին բժշկութեան աղօթք եւ խաղողօրհնէք:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան ներկայ եղաւ արարողութեան, փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը, եւ ներկայացուց օրուան խորհուրդին իմաստը:

Արարողութենէն ետք, քահանայ հայրերը այցելեցին հիւանդանոցի հայ հիւանդներուն, աղօթեցին անոնց առողջութեան համար եւ օրհնուած խաղող բաժնեցին անոնց:

## **BLESSING OF GRAPES AT GLENDALE ADVENTIST HOSPITAL**

Each year on the occasion of the Feast of the Assumption of the Holy Mother of God, parish pastors and deacons from St. Mary's Church in Glendale visit Glendale Adventist Hospital to offer prayers of healing and bless grapes.

On behalf of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian participated in this service on Wednesday, August 6<sup>th</sup>, and conveyed the Prelate's blessings as well as his message.

After the prayer service, the priests visited patients and distributed blessed grapes.

## Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

1984-Էն սկսեալ, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն եւ հոգաբաժնութեան հովանաւորութեամբ, կը կազմակերպուի Երիտասարդաց խմբակի ամառնային Camp Shining Light բանակումը, որ կը տեւէ մէկ շաբաթ եւ կը վայելէ հովանաւորութիւնը Ս. Խաչ Մայր Տաճարին: Այս տարի բանակումը տեղի կ'ունենայ Angeles Oak շրջանի բանակավայրին մէջ:

Այս տարի կրօնա-դաստիարակչական բնոյթ կրող ճամբարին մասնակցողները Կիրակի, Օգոստոս 3-ին մեկնեցան բանակավայր:

Անոնք իրենց պատասխանատուներուն՝ Շիրազ Սաւոյեանի եւ Շանթ Զէնտիրեանի ցուցմունքներով հետեւեցան կրօնական դասաւանդութեանց, ինչպէս նաեւ Սուրբ Գրային ընթերցումներու եւ շարականի ուսուցումներու:

Բանակումին մասնակցող պատանիները առիթը ունեցան կատարելու նաեւ արտադասարանային աշխատանքներ, ինչպիսին են մարզական խաղեր, լող, արշաւ, ձեռային եւ այլ աշխատանքներ:

Չորեքշաբթի, Օգոստոս 6-ի յետմիջօրէին, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան ժամանեցին բանակավայր. երեկոյեան հաւաքական ընթրիքէ ետք, Գերպ. Յայր Սուրբը ներկաներուն փոխանցեց Առաջնորդ Սրբազան Յօր օրհնութիւններն ու ողջոյնի խօսքերը եւ շնորհաւորեց կազմակերպիչ Երիտասարդացի պատասխանատուները, անոնց մաղթելով յաջողութիւն իրենց եկեղեցանուէր աշխատանքներուն մէջ:

Ապա, Յայր Սուրբը տուաւ դաստիարակչական դասախօսութիւն մը:

Յայր Սուրբին դասախօսութեան հետեւեցաւ գրոյցի պահ մը:

Բանակումին մասնակցողները կը վերադառնան Շաբաթ 9

Օգոստոսին:

### CAMP SHINING LIGHT

Since 1984, a weeklong religious and educational summer camp for youth called Camp Shining Light has been taking place by the initiative of the pastors and Board of Trustees of Holy Cross Cathedral in Montebello. Throughout the week, youth attending in the camp follow lectures, Bible readings and meditations, and also participate in various activities including sports and arts and crafts.

Participants departed for the Angeles Oak campsite on Sunday, August 3<sup>rd</sup>, led by directors Shiraz Savoian and Shant Kenderian. On Wednesday, August 6<sup>th</sup>, Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Ashod Kambourian visited the camp during which Fr. Aznikian conveyed the Prelate's blessings and message to the youth and commended the organizers, wishing them success in their service to our church.

Fr. Aznikian then gave a lecture to the youth which was followed by a discussion

Participants will return from the camp on Saturday, August 9<sup>th</sup>.

